

Մ Ա Յ Ի Դ Ի Ի Ա Ն

ՄԻԹԱՐԵԱՆՑ ՎԵՆԵՏԿՈՅ. - Ի Ս. ՂԱԶԱՐ

Ա.

ՊԱՏՄԱԿԱՆ ու հետաքրքրական թուղթերու անտիպ շարքը՝ գոր հրատարակել կը սկսինք՝ անշուշտ հաճելի ընդունելութիւն մը պիտի գտնէ մեր ընթերցասիրաց կողմանէ, նկատելով անոր բազմազան օգուտները՝ որ կրնան յառաջ գալ ու լուսաբանել թերևս մութ կէտեր՝ ազգային ընդհանուր կամ մասնական պատմութեան մէջ:

Կը դնենք նախ նամակ մը, գրուած՝ 1707ին և ուղղուած առ մեր կը. Հայրը Մխիթար Աբբայ. նամակագրին ստորագրութիւնն է «Վարդան Արքեպս. Լէօպոյի», այսպէս՝ առանց մականուան. Կ'ուղղէ իր աքսորավայրէն: Յայտնի է որ Յուսանեանն է, որ վարած է Լէօպոլսի թեմը 1681էն՝ մինչև իր մահը, այսինքն մինչև 1715: Ըստ կարեւորին ամփոփ ծանոթութիւն մը տալու համար Մխիթար Աբբայի հետ թղթակցող այդ բարձրաստիճան Եկեղեցականին վրայ՝ հետեւեալ գլխաւոր ժամանակագրական տեղեկութիւնները կը քաղենք զանազան աղբիւրներէ:

Հ. Ալիշանի կամեկիցին մէջ կը գտնենք.

«Վարդանս այս էր որդի Յունանու քահանայի, ուստի Յունանեան կոչեցաւ, «ի ճագու գեղջէն մերձ թօխաթու. էր ճարտար զրագիր, ուշիմ և հմուտ քառիցն «Հայոց: Երթեալ յէջմիածին, և անտի ընդ նուիրակի գայ ի Լեհաստան. ուր «զրարեկարգութիւն և զուղարփառութիւն Հայոց տեսեալ՝ մտանէ ի Գլարատունն «Հայոց. ուստի զկնի ուսանելոյն ինչ լատիններէն՝ գնայ ի Հոռվմ, և ի դպրատանն «Ուրբանեան ուսեալ կատարելապէս զլատին լեզու, թարգմանէ (գլխաւորապէս) «Երկրինս, յամի Տեառն 1671. տպի գեղեցիկ ոճով, բայց խրթին և նոր բառերը: «Զկնի արքեպիսկոպոսին Նիկողայոսի՝ ոչ շատ յամեցեալ և ինքն ի Հոռվմ, դառնայ «ի Լէօպոլիս. բայց զի Նիկողայոս առոյգ էր և առողջ, առեալ զհրաման ի Ս. «Ժողովոյն երթայ ի Հայաստան քարոզելոյ աղագաւ. ուր ընդ ամս իբր տասն «տէէ» (էջ 143): Սոյն Նիկողայոս արքեպիսկոպոսն է որ Ս. Ժողովոյն թոյլաւորութեամբ իրեն յաջորդ կ'ընտրէ և կը ձեռնադրէ իւր աշակերտը՝ զՏէր Վարդան Յովնանեան, իբր տիտղոսաւոր Եպիֆանիոյ «և առեալ զիշխանութիւն ի Սրբազան «Փափէն, զպարգևս զանազանս և զմակագրութիւն ընտանի և առնթրեակաց Բլէշաղի «և Գավալերի Ս. Միքայելի, դառնայ ի Լէօպոլիս: Առնէ բազում ուղղութիւնս,

1. Հ. Ալեշանի Գրիգոր Ա.էն սկսեալ Լեմպերկի եպիսկոպոսաց շարքը ցուցուցած ատեն՝ այդ թուականը կը դնէ, կանխապէս ըսելով սակայն, որ ասոնց յաջորդութիւնը և թուականը դեռ քննութեան և ստուգութեան կը կարօտին (կամեկից. էջ 5). Հայ-Վեներան մէջ կը դնէ 1677 (էջ 342): Զամչեան ալ կը նշանակէ 1686 (տես Պատմ. Հայոց Հո. Գ. էջ 648): Իսկ Հ. Մինաս Բմբէկեան (տես Զանապարհորդութիւն և Լեհաստան. Վեների 1830. էջ 108) և Բաղարեան Հ. Վ. (տես Եկեղ. Պատմ. 1872 էջ 382) կը դնեն 1686:

2. Ալեւի ծանօթ՝ Նիկիւ անուամբ:

3. Զամչեան. Պատմ. Հայոց Գ. էջ 680.

« զայցարարութիւնս եկեղեցեաց, զեղբայրակցութիւն Ս. Գրեգորի Լուսաւորչին և զԱստուածածնին սասմանէ և հաստատէ ի Լէօպօլիս »։ (Անդ)։ Յաջորդ բացատրութիւնն ինքնին կը հասկցուի որ վարդան եպիսկոպոս դարձեալ Հայաստան դարձած է, ու միայն « Լուսա զեկեղեցեաց Նիկիոյայոսի արքեպիսկոպոսին Լեօպօլի, հնարիւք եղեալ ի Հայաստանեաց » զայ ի Լեօպօլիս և տրիե աթոռոյն, զոր ընդ ամս 29 կառավարի բարի վարուք »։ Նոյն տարւոյն մէջ իննովկենտրոս ԺԱ.էն կ'ընդունի արքեպիսկոպոսութեան տիտղոս և եմփօրոն (էջ 144)։

Իր առաջնորդական գլխաւոր գործերէն մին պէտք է համարել 1689 հոկտ. 10ին գումարած գաւառական ժողովը Լօվնի մէջ, « ու քաշվեցան, կ'ըսէ, [անշուշտ « եկան, ամփոփուեցան, կ'ուզէ ըսել] յամէն քաղաքէ քահանայք. ուր Գեբ. Նուն. « ցեղուն Գանդէլմի բրէզիտէնս կ'լայ : Այս ժողովքին մէջ արարին, որ Պատարագատետր « սրբազրդի ու տպվի ի Հոսմ, և Տօնացոյցն ալ, և ուրիշ բաներ. և այսպէս խրկեցին « զասոնք ի Հոսմ. ու խնդրեցին զՍուրբ Ժողովն, որ զՏէր Աստուածատուր եպիսկոպոսն « ձէնէ [այսինքն ձայն] ի Հոսմ, սրբազրէ զայս զրքերս, ու տպել տայ » (էջ 129)։ Քիչ մը վար յուսախաբութիւնը կը կարգանք. « Աստուածատուր եպիսկոպոսն յայս « տարի եկաւ ի Հոսմ, միաց ի հոն 8 տարի. դարձաւ ի Լօվն 1698ին. չի կարցաւ « իր մ'ալ հաստատելու. զէրամ, սուրբ Ժողովքն չուզաց փոփոխութիւն անելու « վասն արեւելեան Հայերուն, որ ալիթով չխոտին, ու ալիթով, զի Բաղէր Պօնէզանայ « Բրէքէֆոն (ինչպէս որ լսեմ ամ,) զամեն այն բանը կ'աւիրէ »։

Իր վերջին տարիներու գործունէութեան մասին յիշատակագիրը կ'ըսէ։

1698ին « Աստուածատուր եպիսկոպոսն յայս տարի ի Հոսմայ դարձաւ ի Լօվն, « սուրբ Ժողովին հրամանաւ գօտիւղոր (օգնական) ու սուզցէսոր (յաջորդ) արքեպիսկոպոսութեան Լօվայ. զէրամ վարդան արքեպիսկոպոսն շատ սուրիքովադ « արավ, պատճառ դնելով զիրէն ծերութիւնն ու զտկարութիւնն, Բայց շիտակն « ասեւով, ինքն՝ օտար երկրի ըլլալով, ու զամենայն բան Բաղիւնէրուն (լատին « կրօնաւարք) խրքոմն անելով, շատ անգամ զժողովոյն սիրտն ագրեց. յետք ոչ « ժողովուն, ոչ քահանայք աէպ (պատիւ, յարգանք) չէին դնել. ասոր համար « հնարքով զԱստուածատուր եպիսկոպոսն ի հոս եբեր, և զամենայն իշխանութիւնն « ձեռքն եղիր. զարտ (զատ, բացի) զիրէն աթոռն ու զարհիւպիսկոպոսութեան « դիտուլն (titre) (էջ 130) »։

Յատկապէս կ'ընծայուի վարդան արքեպիսկոպոսին Քաջաւերական Թուղթ մը առ Եւդոկիացիս ուղղուած, որմէ Հ. Ալիշան կը քաղէ իր «Կամենից»ին մէջ ժամանակագրական դէպքերն ու ազգային եկեղեցական անցուղարժը, յորս էլ գլխաւորն է 1626ին Միելիսէթ Էլմիածնի կաթողիկոսին Լեօպօլիս երթալը, ըստ ժամանակազրին՝ անկիր ձողով անցնելու դիտումով։ Այս միտքը չի յիշուր Ստաքէ Դաւրժեցոյ Պատմութեան մէջ։ Սա կաթողիկոսին քաղէ քաղաք ջրջելուն պատճառ կը դնէ՝ հակառակորդներուն և պարտատէրներուն երեսէն խուսափել, հանգիստ վայր մը գտնելու համար՝, Լեօպօլիս մէջ Միելիսէթ անհովիւ մնացած ժողովուրդեան վրայ կը ձեռնադրէ եպիսկոպոս զնիկոլ՝. և այլն։

Գալով « Կամենից » ի Յիշատակարաններէն միոյն՝ կը գտնենք 1683 թուականաւ այսպէս. « Որ ինչ ի զրքի աստ պարունակին՝ ժողովեցան յինէն ի զանազանից « զրոց և ի տետրակաց հնացելոց, մինչ պանդխտանայի ի Վերին Հայս, և ի մի

1. Պատմ. Առաքել Դաւրժեցոյ. Վերջապ. 1884 էջ 173-174 և 389.

2. Մեղիսէթ կաթողիկոսի իւզովի Հայութեան ուղղած իսկական ձեռագիր մեծադիր կտրուկը՝ որ պաշտօնապէս կը հազորդէ ճնշուլ իրենց եպիսկոպոս ձեռնադրած ըլլալը՝ կը գտնուի Ս. Ղազարու Դիւանի մէջ։ Ահա կարեւոր

« պարփակեցան ևն... Ես (Վարդան Յունանեան) ոչ հեղինակ սորին՝ այլ հաւաքող « միայն եմ. որպէս և զբազումս զայլս գրեանս ընկօրինակեցի ի Հայոց երկրէն, « որք չէին աստ յերկրի Լիհաց, վասն ջատագովութեան կաթողիկէ հաւատոյ « ընդդէմ ոմանց հակառակասիրաց մերազնեայց » [ի Ս. Ղազար] « Խամեկից » էջ 197 :

Հ. Տաշեան « Թուրք քայաւրական »-ը ցանկագրած ատեն աւելի պայծառորէն հետեւաւ ամփոփ տեղեկութիւնները կը հաւաքէ, Վարդանայ կենաց և գործոց մասին. (տես Մայր Յուդակ Հայ Զեռ. Մի. Վիկենայի. էջ 116) « Հեղինակն արդէն ինքզինք կը յայտնէ գրութեան մէջ իբրև արքեպիսկոպոսն Լէօպոլսոյ ԺԷ. դարուն վերջերն ու ԺԸ ի. սկիզբն, որ երկար ատեն ճամբորդած է Հայաստան ևն. Եւ է Վարդան Յունանեան, որուն գրութեանց վրայ հետեւեալը կը գրէ Ստեփանոս Ռոշքա իւր ժամանակագրութեան մէջ Յունանեանի մահուան ատթիւ յամին 1715 (Զեռ. 266, թղ. 427. ^ա) « Վարդան Յունանեան... էր խոհեմ, խորագէտ, ազգատառէր և անպարտապ ի գրելոյ և ի թարգմանելոյ. թարգմանեաց զքրեթիիզմն և զփանհանյաւ. պետականն հսովակաւն, կերտիւր քահանայից, Աստուած [արանութիւն ?]. Պակասու. թիւնք Պատարագին, Եփեսարանն (մաշտոց), Գանձարան ազաւթից և այլն. Գրեաց զփաշարեարկան բռնորն առ Եվդոկիացիս, որ է գիրք լի վկայութեամբ Հայոց ժողովոցն, կաթողիկոսաց և վարդապետաց, մինչ և ցիւր ժամանակն. Զեռնազրեաց եպիսկոպոս միայն զ(Գ)նէնտիոս վարդապետն, իսկ զքահանայս բազումս. նորոգեաց զքնակարանն Արքեպիսկոպոսականն, և այլն. Վարդան Յունանեան արքեպիսկոպոսն մեր Լէօպոլսի ամաց 81, արքեպիսկոպոսութեանն յամի 29, յունիսի 15 մեծաւ ջերմեանդութեամբ հանգեաւ ի Քրիստոս ևն » :

Ահա այս արքեպիսկոպոսն է, որուն մէկ նամակը, որ մահէն 8 տարի առաջ գրուած է, կը հրատարակենք հոս։ Սակայն կանխենք ըսելու. թէ փնասներ ունեցած է Շուէտացիներէն՝ այդ կը իշխանակուի. բայց թէ այդ թուականներուն իր ի կամենից գտնուիր Շուէտացոց բռնութեան արդիւնքն է, ոչ մէկ տեղ չհանդիպեցանք իշխանակութեան, մինչ իր նամակը կ'ըսէ զայս։ Այդ տեսակէտով՝ յայտնի է՝ իր կենաց շուրջ նոր լուսաբանուած ծանօթութիւն մ'է այդ։ Նամակն ուղղուած է առ Մխիթար Աբբայ՝ երբ դեռ նա Մեթոնն էր։

Ահաւասիկ.

Ամենապատիւ Տէր և Եղբայր ի Քրիստոս

1707 Յունվ. ի. ի Գամենից

Զգրեալսդ Յունիսի Ժե. յամի Տն ոչն [1705] ընկալայ յամին Տն (ա)չդ [1706] ի փետր. Ժգ. և զի յայնժամ ոչ պատասխանեցի, առբասրել կարէին զիս առ Ամենապաւտուած ինդ նախ անբախտն զիպուած Սվէտացոց բռնութեանն¹. յորմէ խուսել հարկեւ

մասը. « Զի եկաց ի յամստեղս ահնեալ մաշտաբազան իւով. իբրև ի յաթոռակաւ տեղ. և տեսաց որ առջը « շունէին. և բազում ժամանակս առանց սառչի վարէին զկեանս իւրց. բազում անգամ մեզնէ առջը խնդրէին. « իմ եպիսկոպոսն. բայց ոչ կամեցայ զիմ եպիսկոպոսն այս տեղս առջը դնել. վասն որոյ ըստ ինքրոյ նց քննութի « արարաց ի միջի մերում, եպիսկոպոսն. և միաբանիւց. Եւ ձեռնադրեցաց Զար Նիկողոսն. Այս տեղացի. Պրն « Եւագուրի որդին, Թորոսնց. Եւ ահնեցաց եպիսկոպոսն. մեր բարձր հայրապետական իշխանութեամբս Լուսաբոխ սք « մեռնաւ և սք յաւնի Տն սք Գրիգոր Լուսաբոխէն. վկայութեամբ ». և այլն... « Ահնեցաց զհոգեւոր որդին մեր « զար Նիկողոսն Արքեպիսկոպոսն Լովա ցղրին ». և այլն. « Գրեցաւ. թվ. ոչն. Կիկա. ամսոյ Իմ. Զեռնար. մեղաւոր « գրչի բիւր քանքարոյ Պարտական. Սիմոն լոկանուն իրիցիսիս », Հուսկ բուն ստորագրութիւնը. « Տն ՏՐ ՄԵԼՔԻՄ « ՍԵՂԻ ԿԹՂԿՍ ԱՄ ՀԱՅՈՑ ՄԻՆ ՅԻ ՔԻ ՏՎԻ ԶԱՅՍ ԳԻՐՄ. ԶԵՌԱԳԻՐ ԱՅՍ Ե » :

1. Որ ամէն կողպոստ և շարիք հասցնելէ վեր ի Լէօպոլսի՝ յափշտակեր էին նաև իր զրքերը, զորս կազմեր էր Ս. Ժողովէն ստացած հազար սկուտով, ինչ որ տասը տարիէ ի վեր իբր եպիսկոպոս դեռ չէր առած, Որովց (այսինքն հազար սկուտով) զտիպ (գրոց) ցնդեցիկ կազմեաց. զոր յափշտակելով ապա Շփնացն, խափանեցան գործերս (« Կամենից » էջ 144).

ցայ մինչև ցփօսօլիայ, ուր ոչ դիրապէս տրէին առիթ՝ յայնժամ սուրհանդակաց. նաև զիրգ բնականը ծերութեան. տկարութեան բնածնի, նուազութեան ալաց և այլք անդրաւ՝ մարտութիւնը ներգնոց և արտաքնոց զգայութեանց, արտագործութիւնը այսր տիոյ: Զի մի սակաւի բժիւ ամադրութեան փաղանշանիցէի յանձնանիցէի իմոց բարուց, յօժարեցայ արդ սակաւութեւ պատասխանել, թէ և անպաւն:

Ի գրեցելոցդ, վերադարձեցի... գերկու ինչ: Նախ զնախանձ գովելի, և զգովեալոյն դիտաւորութիւն Եղբայրութեանդ, իսկ և զեզերեցումն կամի ամենախոնձ և լի Աւաքեականաւ Սիրով, զոր օկզնաւորեալդ է նայդմ Դղեկոշ. առ ի լինել զօրավիգ ճշդութեան և նպաստ նորին սերեցման ի մերազնեայտ, աշխատասիրութեամբ Աշակերտեցելոցդ: Զորս նախապետաբար հիմնես թաշ յԱռաքինութիւնս աստուածայրականս, զի գովելաբար զարգանայցեն յոգիս, և զարտագործութիւնս պտղաւէտս Առաջադրութեանդ բարւոյ՝ բողբոջեսցեն, և մարգես զնոսա, զի զառս ամենեսին ուղղաւորեցին ի փառս Աստուծոյ, և ի փրկութիւն հոգւոց մերձաւորաց. և ապա երկրորդաբար զգիտութիւնս իմաստից վսեմագունից ջամբել վարանիս նոցին. իսկապէս ճանաչելով թէ յոգիս աւաքինասէրս շնչտակի ներամման հանճարք պէտպիսեաց՝ գիտութեանց, և նոյնք ինքեանք յարմարագոյնք լինին յընդունակութիւն նոցա. իսկ և խոկալով բարւոց, թէ գիտութիւնք Սիւսլաստա կանք, թարց ներհմտութեան ոգեկանաց իմաստից, համեմատեցին մարմնոյ՝ առանց հոգւոյ, կամ Պատկերի նկարեցելոյ, որ ապացուցանէ արդեօք զնախատիպն՝ ըստ նիւթոյ, այլ զներգործութիւն իմն կենդանական ոչ կարէ վարժել, նկրտիս ամենեկին, զի երկաքանչիւրն շարունակեցեալք համահամայն յոգիս Աշակերտեցելոցդ՝ առնիցեն զնոսա կրկնապատկի պատուոյ և հետեւապէս նոյնքանոյ պտակի՝ համարժանս, ըստ Առաքելոյն զգացման, որպէս զի բանիւ գիտութեան, և օրինակաւ Առաքինութեանց՝ յառաջադէմք լինիցին ժողովրդեանն Աստուծոյ: Ընտրողաբար ուրեմն նախադասես զիմաստն ոգեւոր՝ նիւթականին, ըստ Առածին այնմ հռչակավիպի. Աստուի ուսուցանէ վարուց բարխորիւնսկոյրն քան բանից վախդապետաբար: Զայսոսկի և զայլս յոգուս Առաջադրութեանդ զգացմունս ներազննելով՝ ոչ միայն զընտանեցի զարարդ, այլ և փաղակացուցի յիս նիւքեան առաւել քան զսովորականն, շերմապէս և անորով աղօթել վասն Եղբայրութեանդ, և Աշակերտեցելոցդ, որ և առնեմ իսկ ներգործապէս, զի ի դմին յամիցէք և օր ըստ օրէ անիցէք ի զօրութենէ ի զօրութիւն:

Երկրորդ՝ զինդիրդ համատ և Աստուածահաճոյ, զոր բաղձայ Եղբայրութիւնդ ինև լնանիւ, այս է. զի թարգմանիցեմ զԼնթացն Աստուածաբանական, ի վճատբալից աղբերց վարդապետացն Հոսմէականաց, որով մարթայցէ ներհմտացուցանել զիսս ստորադրեցեալս առ լաւագոյն ընձեռումն Առաքելականի Պաշտաման: Արդարև ինդիր սուրբ և ամենագովելի, բայց անհանգէտ իմոցս ուսոց՝ բեռն Նախ, զի իրականութիւնդ այդ, պահանջէ զգիտութիւն և զգիտութիւն մեծ երկոցունց լեզուաց, զոր էս լուսիմ բաւականապէս: Երկ. զառողջութիւն և զամբողջութիւն, որք այժմ ոչ գտանին յիս, գովով իմ արդ պակասեցեալ յուժոյ և ի լուսոյ, և զրեթէ ծիրեցեալ ի ծերութենէ և գործաւորանքս անպիտանացեալք. ինդրեիւ ի ուրեմն ի գիտնագունից և մանկագունից քան զիս: Այլ ընդէր և այս. ոչ ապաքէն իմաստասիրութիւն և Աստուածաբանութիւն Հրեշտակականի վարդապետին Ագուինացւոյ վաղ ուրեմն թարգմանեցեալք գտանին այժմ ի մէջ Ուղղափառացն Հանկեցոց: Խնդրեսցէ Եղբայրութիւնդ ի նոցանէ և նոքա (որպէս են. թաղբեմ) չեն զլանալոցք. մասնաւոր մինչ լսիցեն հանդերձեալ զու տպագրութեամբ ի յոյս ածիւ, որպէս խոստանասդ: Գտանի առ իս ընդօրինակեցեալ բնաբանութիւն, այսինքն Ֆիգիբա, մասն ինչ ի Կղէմայ, բարւոյ յիշատակի վարդապետէն, և մասն յԱլիօզէ արարեցելոցն. Եթէ յօժարեցի Եղբայրութիւնդ՝ յոյցից, յորժամ դարձայ յազսորդանաց աստի ի Լէօպօլիս:...

Մնամ խոնարհագունեղ ծառայ
վարդան Արքեպս. Լէօպօլոյ

Բ.

Յաջորդ թուղթը գրուած է ի վեկետիկ ի շորրորդում օգոստոսի 1708 ձեռամբ խաչատուր վարդապետի երգրումեցիւ ի մէջ ալոց կը հաղորդէ Մխիթար Աբրաի որ ինք (խաչատուր վ.) առաքելական քարոզիչ կարգուեր է Ս. ժողովէն։ Ահա ամբողջութեամբ.

Սիրեպազունեղ Եղբայր Իմ ի Տէր.

Սիրելագունեղ մայր մեր հանդերձ երկու թոռամբք եկեալ էնաւ ի մայրաքաղաքս վէ. նետիկ, և պատմեաց մեզ զամենայն մարդասիրութիւն ձեր, զոր ցուցեալ էր նմա եղբայ. րութիւն ձեր. և աստ ի վէնէտիկ բնակի հանդերձ թոռամբք և ալովք անձամբք. և է աստ մնալոց... Եւ ես մնացի աստ, և ստեղծայ ի Սուրբ ժողովոյն Առաքելական միւ. սոնար Հայոց աստ եղելոց, ըստ խնդրոյ սիրելագունեղի եղբոր Գրիգոր Վարդապետի Թախաթեցւոյ, որ այլ ուրիշ սահմանեաց գնալ։ Ի յեկեղեցւոյ Հայոց ի շաբաթն երիցս քարոզեմ...

Ի վէնէտիկ ի շորրորդում օգոստոսի 1708

Եղբայրութեան ձերոյ
Հրմեռանդագունեղ ծառայ
խաչատուր վարդապետ Երգրումեցի

Գ.

Հետաքրքրական է նաև հետեւեալ անտիպ գիրը, ո՛չ միայն իր մէկ երկու ազ. գային պատմական անցքերուն, այլ նոյն իսկ նամակագրին առ Մխիթար և իր Մխարանութիւնն տաճած սիրազեղ համարման և յարգանքին գողտրիկ բացատրու. թեան համար.

Գերապատուելի Աբրա Տէր Մխիթար Ճշմարտառասնիցի Ամբաստանեալ Վարդապետի.

Յսուանդ ողջոյն բազմաւ սիրով մատուցանեմ Սրբաճնունդ անձին քում, և որք ընդ քե հնազանդեալք բարձօք խաչին և հեռեւօք խաչեցելոյն են, ի Տէր յոյժ խնդալ։ Արդ սէրն քո որ ունէիր ի վաղուց հետէ ընդ մեզ, որպէս որ մենք ունէաք նոյն սէրն ընդ քեզ որպէս որդի, և յայժմ որպէս եղբայր հոգեւոր։ Սիրալրական քարտեզն քո ընկալայ զոր գրեալ էիր թւին Քի ա էձ ժգ, և մարտի ժա, ուրախաց սյ յոյժ, և միշտ պաղատեմք առ ամենակարօն զի տացէ յաշողութիւն հոգեւոր գործոյդ, աղօթիւք ամէնօրնեալ կուսին, և հոգեւոր հօրն մերում Սրբոյն Գրիգորի. զի անեալ բուսանիցի և լինի ծառ մեծ, և արձակեցէ ոստս ընդ ամենայն Հայաստան, որպէս որ եղև ի նախնաւ միջնապետս միջնորդութեամբ Սուրբ հօրն Անտոնի. քանզի վերջինս այս առաւել հարկաւոր թուի քան զառաջինն, որպէս որ ի հարսանիս կանա գալիլիացւոց վերջին գինին ախորժ եղև քան զառաջինն, խնդրեմք զի այնպէս արասցէ և այժմ բա. րեզուսին Յս մաղթանօք բազմեցիւովք ընդ նմա ի հարսանիսն Ամէն։ Արդ՝ յայտ առնեմ զբաղձանս սրտի իմոյ որ ի դառնալն իմ հանդիպիմ տեսութեան միմեանց, քանզի հրաման եղև վիհապետէն և սբ ժողովոյն, աստ ի Հոռմ եղեալ ուղղափառ եպիսկո. պոսաց հայոց և ասորոց, զկին յարութեան զատկին գնալ իւրաքանչիւր ուր և կամեսցի, որպէս առաքեալք ի Սուրբ եկեղեցւոյն. և զաղտաբար չըջիլ և քարոզել զբանն կենաց։ Վասն որոյ յօժարութեամբ կամիմ հանդիպիլ Տէրութեան քում և շահիլ յաղօթից ձերում։ Ողջ լեր ի Տէր։

Թւին Քի 1713 զեկտեմբերի 10 ի մեծն Հոռմ յեկեղեցին հայոց.

Տէր Գրիգոր Թափիչեան եղեսպցի
հեռեւօք ճշմարտութեան։

Գերապատուութեան քում խոնարհագունեղք ծառայք տէր Ստեփանոս և տէր Թովմա արեղայքն իմ Սրբաճնունդ աղջ համբուրեն և խնդրեն ի Տէրութենէ քումմէ զի յանձն արաս. ցես աղօթիւք զնոսա կամաց Ա. նոյնպէս ծնողնի մերտնցի ասլան տէր Թաղէոսն խնդրէ։

(Շարունակելի)

Հ. Ղ. ՏԱՅՏԱՆ

